«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ	Սովորողների մոտ ստեղծագործական ունակությունների զարգացումը տեխնոլոգիա առարկան դասավանդելու ընթացքում:
ԱՌԱՐԿԱ	Տեխնոլոգիա
ՀԵՂԻՆԱԿ	Սարգիս Հակոբյան
ՄԱՐԶ	Արագածոտն
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ	Լեռնապարի միջնակարգ դպրոց

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3
Գլուխ 1 . Ստեղծագործական ունակություններ

1.1« Ստեղծագործական ունակություններ» հասկացությունը. 4

1.2«Ստեղծագործական ունակությունների» ընդհանուր բնութագիրը

. 5

Գլուխ 2: Տեխնոլոգիայի ժամերին ստեղծագործական ունակությունների զարգացումը

2.1 Ստեղծագործական ունակությունների զարգացումը տարրական դասարաններում

. 6

2.2 Տվյալների մշակում և վերլուծություն. 9

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ. 15

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ. 17

Ներածություն

Ժամանակակից կրթությունը ստեղծագործ, անկախ, ազատ անհատականության դաստիարակությունն է, քանի որ դա ստեղծագործ անձն է, որը որոշում է մարդկության առաջընթացը:

Յուրաքանչյուր մանկավարժ իր գործունեության ընթացքում հանդիպում է աշակերտների տարիքային զարգացման օրինաչափությունների ճանաչման և դրանցով առաջնորդման խնդրին , ինչը կարող է նպաստել ուսումնական գործընթացի արդյունավետ կազմակերպմանը:

Ուսումնական գործունեության ընթացքում ուսուցիչը հանդիպում է այն փաստին , որ յուրաքանչյուր աշակերտ ունի իր անհատական աշխատանքի ոճը , իր ուրույն բնավորությունը , խառնվածքը , աշխատանքային տեմպը և այլն:

Այդպիսի անհատական առանձնահատկությունների ընդունելն ու հաշվի առնելը օգտակար է ուսումնական դժվարությունների լուծման ժամանակ և խթանում է ուսումնական գործունեությանը: Նպաստում աշակերտների ինքնուրույն ստեղծագործական կարողությունների ձևավորման .

Ուստի յուրաքանչյուր ուսուցչի առաջ դրված է մի պարտավորություն , որպեսզի իր գործունեության ընթացքում կարողանա ճիշտ ուղղորդել իր սաներին , խթանելու նրա ստեղծագործական կարողություններին վերաիմաստավորելու նրա յուրաքանչյուր կատարած քայլը:

Հետազոտական աշխատանքի արդիականությունը կայանում է նրանում, որ տեխնոլոգիա առարկայի իմացությունը միշտ խթանել ու խթանում է երեխաների երևակայությունը, զարգացնում տրամաբանությունը, օգնում է ստեղծագործել, զարգացնել միտքը:

Հետազոտական աշխատանքի նպատակն է հաշվի առնել ստեղծագործական կարողությունների զարգացման ասպեկտները.

- Բնութագրել ստեղծագործունեությունը, որպես մտավոր գործընթաց,
- Հաշվի առնել ստեղծագործ մարդու էությունը,
- Ուսումնասիրել ստեղծագործական կարողությունների զարգացումը
- Վերանայել ստեղծագործական հիմնական հասկացությունները:

Գլուխ 1 . Ստեղծագործական ունակություններ

<<Մենք գալիս ենք աշխարհ , որպեսզի հասկանանք գեղեցկությունը , հաստատենք և ստեղծենք այն>>: Վ. Ա. Սուխոմլինսկի

1.1«Ստեղծագործական ունակություններ» հասկացությունը

Ստեղծագործությունը հասկացվում է որպես հասարակական նշանակության նոր և օրիգինալ ապրանքներ ստեղծելու գործունեություն:

Չկան հատուկ ստեղծագործական ունակություններ, բայց կա որոշակի մոտիվացիա և գծեր ունեցող մարդ: Իրոք, եթե ինտելեկտուալ օժտվածությունն ուղղակիորեն չի ազդում մարդու ստեղծագործական հաջողության վրա, եթե ստեղծագործության զարգացման ընթացքում որոշակի մոտիվացիայի և անհատականության գծերի ձևավորումը նախորդում է ստեղծագործական դրսևորումներին,ապա կարող ենք եզրակացնել, որ կա անհատականության հատուկ տեսակ.- «Ստեղծագործող անձնավորություն»:

Մարդիկ ամեն օր շատ կատարում են տարբեր գործողություններ՝ փոքր ու մեծ, պարզ և բարդ: Դրանցից յուրաքանչյուրը մի խնդիր է , երբեմն պարզ , երբեմն ավելի բարդ;

Խնդիրները լուծելիս տեղի է ունենում ստեղծագործական ակտ, նոր ճանապարհ է հայտնաբերվում կամ նոր բան է ստեղծվում: Հենց այստեղ են պահանջվում մտքի հատուկ որակներ, ինչպիսիք են դիտումը, համեմատելու և վերլուծելու, կապեր և կախվածություններ գտնելու կարողությունը. Այն ամենը ինչ ընդհանուր առմամբ կազմում է ստեղծագործական ունակություններ:

1.2«Ստեղծագործական ունակությունների» ընդհանուր բնութագիրը

Ստեղծագործությունը գործունեություն է, որի արդյունքը նոր նյութական և հոգևոր արժեքների ստեղծումն է: Լինելով իր էությամբ մշակութային և պատմական երևույթ, ստեղծագործությունն ունի հոգեբանական կողմ ՝ անձնական և ընթացակարգային: Այն ենթադրում է, որ մարդն ունի ունակություններ, մոտիվներ, գիտելիքներ և հմտություններ, որոնց շնորհիվ ստեղծվում է ապրանք, որն առանձնանում է նորույթով, ինքնատիպությամբ և յուրահատկությամբ: Անհատականության այս հատկությունների ուսումնասիրությունը բացահայտեց երևակայության, ինտուիցիայի, մտավոր գործունեության անգիտակից բաղադրիչների կարևոր դերը, ինչպես նաև անձի ինքնաիրացման կարիքը ՝նրանց ստեղծագործական կարողությունների բացահայտման և ընդլայնման գործում::

Շատ հաճախ սովորական գիտակցության մեջ ստեղծագործականությունը նույնացվում է տարբեր տեսակի գեղարվեստական գործունեության ունակության, գեղեցիկ նկարելու, պոեզիա կազմելու ունակության հետ: Ստեղծագործական ունակությունների մանկավարժական սահմանումը դրանք սահմանում է որպես օրիգինալ արտադրանք, ապրանք ստեղծելու ունակություն, որի վրա աշխատելու ընթացքում սովորած առաջադրանքները, հմտություններն ու կարողությունները ինքնուրույն կիրառվում են, դրսևորվում են զոնե մոդելից նվազագույն շեղմամբ Ստեղծագործ մտածողության հիմքում ընկած է տարբեր մտածելակերպը, որը բնութագրվում է հետևյալ հիմնական հատկանիշներով.

1.Արագությունը հնարավորինս շատ գաղափարներ արտահայտելու ունակությունն է:

2.Ճկունությունը գաղափարների լայն տեսականի արտահայտելու ունակությունն է:

.**3**. Օրիգինալությունը ձեր «արտադրանքը» բարելավելու կամ այն ավարտված տեսք հաղորդելու ունակությունն է:

Գլուխ 2: Տեխնոլոգիայի ժամերին ստեղծագործական ունակությունների զարգացումը

2.1 Ստեղծագործական ունակությունների զարգացումը տարրական դասարաններում

<<Երեխան աղքատ աշխատանք է կատարում ոչ թե այն պատճառով , որ չի ցանկանում , այլ այն պատճառով , որ ինքը գաղափար չունի , թե ինչն է լավը , իսկ ինչը ` վատը , ինչո՞ւ պետք է գնահատական ստանա >>:

Ուսուցիչը պարտավորվածություն պետք է ստանձնի , իր գործունեության ընթացքում , կատարելու ճիշտ քայլեր , որպեսզի յուրաքանչյուր երեխա իր մտքի թռիչքը կարողանա ճիշտ օգտագործել իր աշխատանքի ընթացքում , զարկ տա իր երևակայությանը:Ժամանակի հետ փոխվում են տեխնոլոգիաները , մեծ գիտատեխնիկական առաջընթաց է , ուստի պետք է աշակերտների մոտ ձևավորել ինքնուրույն ստեղծագործելու կարողություններ և հմտություններ:

Տեղնոլոգիան այն առարկան է , որի դասավանդման ընթացքում աշակերընները ծանոթանում են տարբեր գործիքների , բնական և արհեստական նյութերի , երևույթների հետ , որոնց միջոցով կատարում են տարբեր աշխատանքնր: Ծանոթանում են կենցաղային իրերի , դրանց պատրաստման եղանակների , ձևավորումների հետ , կարողանում են իրենց պատրաստած աշխատանքները ձևավորել ըստ իրենց ճաշակի և երևակայության : Այստեղից են բխում աշակերտների ինքնուրույն ստեղծագործելու ընդունակությունները:

Ըստ Վ. Ա. Սուխամլինսկու ` << Աշակերտը հաստատապես յուրացնում է միայն այն ժամանակ , երբ նա մտածում է . խորենք այն մասին , թե ինչպիսի մտածողության , վերլուծության , զննման առարկա դարձնել այն, ինչն ուսումնասիրվում է տվյալ պահին , կամ շուտով կուսումնասիրվի>>: [1]

[1] Վ. Ս. Սուխոմլինսկին դաստիարակության մասին, Եր.: «Լույս», 1976

Հենց ուսումնասիրությունների ժամանակ էլ աշակերտները կարողանում են կատարել նոր եզրահանգումների , գնում են պարզից բարդին՝ ստեղծելով նորագույն մոդելներ : Հնարավորություն պետք է տալ երեխային նույն կառուցվածքի վրա մտովի կատարելու որոշակի փոփոխություններ , ստեղծել նորը:

Գործնական համատեքստ

Դասի պլան

Առարկան-Տեխնոլոգիա

Դասարան-3-րդ

Դասի թեման-Խճանկար

Տևողությունը- 45ր

Նպատակը- Զնավորել երևակայական մտածողություն , ինքնուրույն ստեղծագործելու ունակությունների զարգացում:Մաքուր և ճաշակով աշխատելու հմտությունների ձևավորում:

Վերջնարդյունքները- Իմանան, գաղափար կազմեն խճանկարի պատրաստման ձևերի՝ միագույն , բազմագույն և թվերի օգնությամբ խճանկարի մասին ,կարողանան ինքնուրույն փակցնել , սոսնձել, կատարեն անթերի աշխատանք :Կարողանալ տարբերել խճանկարի տեսակները /առարկայական, սյուժետային/:

Մեթոդը- բացատրական,ցուցադրական:

Դասի ընթացքը- գրատախտակին փակցնել խճանկարով կատարված մի քանի աշխատանքներ:Հարցերի միջոցով բացահայտել աշակերտների գիտելիքները այս ցուցադրությունների վերաբերյալ, ի’նչ եք տեսնում,ի’նչ նյութեր են օգտագործված,ի’նչ նյութերից կարելի է պատրաստել:Պատմել խճանկարի մասին, բացատրել,որ խճանկարները լինում են միագույն ,բազմագույն և թվերի օգնությամբ:Հանձնարարել աշակերտներին նկարել ձկնիկ և այն ձևաավորել խճանկարով, օգատործելով գունավոր թղթեր ,ստեղծել բազմագույն խճանկար:Հետևել աշխատանքների ընթացքին, ցուցադրել լավագույն աշխատանքները և գնահատել:

Դասի պլան

Առարկան-Տեխնոլոգիա

Դասարան-3-րդ

Դասի թեման-Խճանկար << Ընձուղտ>>

Տևողությունը- 45ր

Նպատակը-Ամրապնդել նախորդ դասից ստացած գիտելիքները խճանկարի մասին:Զևավորել ինքնուրույն ստեղծագործելոր կարողություն;Ամրապնդել կտրել,պատռել,գծանշում հասկացությունները և մտապահել:

Վերջնարդյունքներ-իմանան միագույն և բազմագույն խճանկար պատրաստելը:Կարողանան ինքնուրույն կատարել էսքիզը ,սովորեն խճանկարի պատրաստման տեխնիկայի գաղտնիքները,նյութերի մշակման տեխնոլոգիաները;

Մեթոդ-Մտագրոհ,բացաբրում ցուցադրում:

Դասի ընթացքը-Մտագրոհի միջոցով վեր հանել գիտելիքները ընձուղտ կենդանու մասի,ապրելու վայրերը և արտաքին տեսքի նկարագրությունը:Այնուհետև ցուցադրել նմուշ օրինկը:Նխապատրաստել գունավոր թղթեր /դեղին և շագանակագույն/ սոսինձ, մատիտ:Բացատրել,որ թուղթը կարելի է պատռել .մանրացնել ձեռքով,ապա կատարել սոսնձման աշխատանքները,նախորոք նկարելով էսքիզը:

Հետևել աշխատանքի ընթացքին,օգնել հեր մնացող աշակերտներին կատարված աշխատանքները ցուցադրել և գնահատել:

2.2 Տվյալների մշակում և վերլուծություն

Ինձ տանջողը ամեն մարդու մեջ սպանված Մոցարտն է: [2]

Անտուան դը Ս.Էկզյուպերի

Ի՞նչ է ստեղծարարաությունը:

Ո՞վ է ստեղծարար մարդը:

Ինչպե՞ս ձևավորել և զարգացնել ստեղծարարությունը տեխնոլոգիայի դասերում:
Ստեղծարարությունը լատիներեն կրեատիվ ,կրեո արմատից է,որը նշանակում է ստեղծել,արարել,ծնել,երկնել:
Ստեղծարարությունը մտածողության տեսակ է ,ուսումնասիրման գործընթաց, որի նպատակը ստեղծարար մարդ ձևավորելն է:
Ստեղծարար մարդը ինքնօրինակ , ոչ սովորական մտքերի ,ծրագրերի ծնունդ տվողն է,որն իր մտքի նոր գաղափարներ է ստեղծում և այն հաղորդում իր շրջապատին:Նա հաղորդում է նոր մտքեր և ոգևորում:
Հաղորդակցման առումով այս տեսակ մարդիկ շատ ինքնավստահ են,որովհետև նրանք հավատում են իրենց ուժերին և շարժվում են առաջ նորը որոնելու և գտնելու:
Մեզնից ամեն մեկը կարող է լինել ստեղծարար ,որովհետև յուրաքանչյուրը և

1. [2] Անտուան դը Սեն Էկզյուպերի - << Մարդկանց երկիրը>>և <<Փոքրիկ իշխանը>> վիպակներից մեջբերումներ:

խոհանոցում և այգում կարող է նոր բան ստեղծել իր այգին իր ձևով փորել և մշակել: Ստեղծարար մարդը ինքնավստահ է , հավատում է իր ուժերին,հաշտ է ապրում աշխարհի հետ:
Ստեղծարար մարդը շատ անսովոր մտածողություն ունի: Նրանց կյանքի նպատակը անընդմեջ սովորելն է:

Ի՞նչից սկսել ,որպեսզի կարողանանք դաստիարակել ստեղծարար մարդ:

Սկսենք նրանից ,որ գիտատեխնիկական այս վերելքի ժամանակաշրջանում ,փոխենք կրթական միջավայրը,փոխենք մեր մոտեցումները ,կրթական նոր մեթոդներով դաստիարակել նոր սերնդին ,կատարել փոփոխություններ ,կրթության որակը բարձրացնելու նպատակով:Կիրառել նոր տեխնոլոգիաներ:Հաճախ դուրս գալ դասարանի պատերից ,կատարել էքսկուրսիաներ ,գնալ այգի,դաշտ,անտառ,բակ և այնտեղ անցկացնել դասը:Յուրաքանչյուր աշակերտին տալ իրեն համապատասխան ցուցումներ:

Կարևոր է փոխել մեր մոտեցումները,ոչ թե նախկին ձևերով ՝ ստիպելով երեխային նստել,այլ տալ ինքնուրույն շարժվելու և գործելու հնարավորություն:Ստեղծարար մարդը միշտ սիրում է շարժվել ,ուսումնասիրել ,պրպտել,գտնել նոր լուծումներ:Նպատակադրումները պետք է փոփոխել տեխնոլոգիայի դասերին :Պրտադիր չէ, որ երեխան նայի գրքում տպագրված աշխատանքը,պատրաստի նույնը ,այլ նա պետք է նաև մտածի , գտնի նոր լուծումներ իր մտածածը պատրաստի իր պատկերացրած ձևով:Այստեղ անհրաժեշտ է ,որ աշակերտին տանք ինքնուրույն ստեղծագործելու հնարավորություն : Աշխատանքը սկսելուց առաջ , նախ կարելի է կազմել թիմեր,աշակերտը ՝ աշակերտի հետ, աշակերտը ուսուցչի հետ, քննարկել, իմի բերել ,հաշվի առնել բոլորի կարծիքները ,հավաքել անհրաժեշտ նյութերը ,մեկը մյուսի հետ համագործակցելով կատարել աշխատանքը:Մտածեն <<Ի՞նչ նոր բան ստեղծեցին>>: Համեմատեն գրքի և իրենց պատրաստած աշխատանքը.գնահատեն , ցուցադրեն : Այսպիսով բոլոր աշակերտները կներգրավվեն աշխատանքում յուրաքանչյուրը իր լուման կներդնի և հաճույք կստանա իր կատարած աշխատանքից: Դպրոցից ,երեխան պետք է սովորի աշխատել ,որպեսզի հասնի իր նպատակներին:Եվ արդի ժամանակաշրջանում պետք է գնահատվի աշխատասիրությունը:

Աշակերտը ուսումնառության ընթացքում պետք է աշխատի ուսուցչի հետ հավասար,որպեսզի վերադառնա տուն իր հետ տանելով այդ սովորածը,ետ չմնա իր ընկերներից:Հասկանա աշխատանքի և ուսման իմաստը: Ծուլությամբ մենք ստեղծարար մարդ չենք ստեղծի:

Ուսուցիչների խմդիրն է աշակերտներին սովորեցնել հարցեր ձևակերպել՝ հետաքրքրությունները բավարարելու համար,և այդ հարցերը ուղղել միմյանց:

Անընդհատ ինչուներին պատասխանելով նրանք սովորում են միմյանցից :Կրտսեր դպրոցական տարիքը անհատի օնտոգենիկ զարգացման փուլն է,մանկության գագաթնակետը:Երեխան պահպանում է մանկական շատ որակներ՝ թեթևամտությունը, միամտությունը: Նա արդեն կորցնում է մանկական անմիջականությունը վարքում,նրա մոտ առաջանում է մտածողության ուրիշ տրամաբանություն : Ուսումը նրա համար նշանակալից գործունեություն է:Դպրոցում երեխան ձեռք է բերում ոչ միայն նոր գիտելիքներ,կարողություններ այլև որոշակի սոցիալական կարգավիճակ:Փոխվում են նրա հետաքրքրությունները,արժեքները ՝ կյանքի ողջ դրվածքը:

Դպրոցական տարիքում ուսումնական գործունեությունը դառնում է առաջնային:Ուսումնական գործունեությունը բազմադրդապատճառականացված է.այն դրդվում և ուղղորդվում է ուսումնական տարբեր դրդապատճառներով:Կան ավելի ադեկվատ ուսումնական խնդիրներ ,եթե նրանք ձևավորվում են աշակերտի մոտ,նրա ուսումնական գործունեությունը դառնում է արդյունավետ՝ իմաստավորված:[3]

Դ. Էլկոնինը դրանք անվանել է ուսումնաճանաչողական դրդապատճառներ: Նրանց հիմքում ընկած են ճանաչողական և ինքնազարգացման պահանջմունքները:Կրտսեր դպրոցականները բարձր են գնահատում իրենց աշխատանքը ,եթե նրա վրա ծախսել են շատ ժամանակ,ջանքեր՝ անկախ այն բանից թե ինչ են ստացել արդյունքում:

2. [3] <<Նախաշավիղ>> 4. 2017 էջ 23 հոդված <<Կրտսեր դպրոցականի տրամաբանական ,ստեղծագործական մտածողության զարգացումը>>:

Ուրիշների աշխատանքներին նրանք ավելի քննադատաբար են մոտենում ,քան իրենց սեփականին:Այսպես ձևավորվում է աշակերտների ավելիին հասնելու ձգտումը:

Աշակերտներին պետք է թույլ տալ ինքնուրույն կատարելագործվելու: Հաճախ նրա կատարած նույնիսկ փոքրիկ աշխատանքը պետք է գովաբանել,ցուցադրել ,գնահատել ,որպեսզի երեխան հասկանա ,որ դա ևս գեղեցիկ է և ձգտի ավելիին հասնելու:

Սռեղծարար մարդը պետք է օժտված լինի բարձր տրամաբանությամբ /լոգիկա/ որը հունարենից թարգմանաբար նշանակում է գիտություն ճիշտ մտածելու մասին կամ վերլուծելու արվեստ:

Պարտադիր չէ լինել գրող, նկարիչ, բամաստեղծ կամ արվեստի այլ գործիչ,որպոսզի օժտված լինել ստեղծագործական մտածողությամբ կամ սկսել ստեղծագործել: Դա պայմանավորված է գլխուղեղի աջ կիսգնդի զարգացվածությամբ և վերջինիս ձախ կիսագնդի դոմինանտությամբ:Ստեղծարար մարդը օժտված է մտքի ճկունությամբ ,ինքնուսուցման հակում ունի , ինքնուրույն է անելանելի իրավիճակներից ելք գտնելու ձգտում և կարողություն ունի:

Ժամանակակից կյանքի բազմապլանայնությունը և արագ տեմպը պահանջում են ճկունորեն և ստեղծագործաբար արձագանքել տեղի ունեցող փոփոխություններին:

Տրամաբանական և ստեղծագործական մտածողությունը հեշտ է զարգացնել փոքր տարիքային խմբերում , քանի դեռ երեխաները դպրոցական ծրագրերի շրջանակներում չեն առնչվել օրենքներին և բանաձևերին:

Այժմ , քան երբևէ հասարակությունը ունի ստեղծաբործող մարդկանց պահանջ:

Մտածողությունը զարգանում է, երբ մարդն իր առաջ կոնկրետ նպատակ է դնում ` լուծելու այս կամ այն խնդիրը:

Ուրեմն պետք է՝ խնդրահարույց իրավիճակ , որից դուրս ելնելու համար անհրաժեշտ է մշակել տարբեր միջոցներ ու ձևեր:

Աշակերտների ստեղծագործական մտածողությունը և ազատ տրամաբանությունը ավելի լավ է դրսևորվում <<Տեխնոլոգիա>> առարկայի ուսուցման ժամանակ: Նրանց

մոտ զարգանում են այն գիտելիքները որոնք ստանում են մաթեմատիկա,ես և շրջակա աշխարհ,մայրենի առարկաներից:

Երեխաները ստեցծարար են նրանց միտքը ավելի ճկուն է երևակայությունը շատ:

Տեխնոլոգիան, ըստ էության գործնական-ուղղորդող ուսուցողական ոլորտ է որտեղ սովորողնորը ձեռք են բերում տարատեսակ նյութերի ձևափոխումների տիրապետելու փորձ:

Այս առարկան սովորողներին նախապատրաստում է տեխնիկապես հագեցած ժամանակակից կյանքին: Դաստիարակում է կիրթ ,ստեղծագործ , նախաձեռնող և ակտիվ անձնավորություններ: Նպաստում է սովորողների ստեղծագործական և գեղագիտական զարգացմանը: Զարգացնում աշխատանքային հմտություններ և ունակություններ, դաստիարակում աշխատասիրություն: Կողմնորոշում է աշակերտների մասնագիտական փորձի ձեռքբերմանը:

Մեծերը հաճախ չեն հասկանում երեխային,չեն ուզում մտածել նրա պես ,իրենց ես-ն են պարտադրում , որը սխալ է: Երեխայի արարաելու,ստեղծագործելու ունակությունները մեռնում են :

Վերադարձանք այն մտքին, որն հնչում է Անտուան դը Սենտ Էկզյուպերիի <<Փոքրիկ իշխանը>> ստեղծագործությունում , ուր հեղինակը այնպիսի վարպետությամբ է ցույց տալիս ,թե մեծերն ինչպես են կարողանում երեխայի մեջ սպանել ապագա նկարչին

/սպանել ,կոտրել մանկությունը/: [4]

<<Եթե մենք սովորեցնենք այնպես , ինչպես սովորեցրել ենք երեկ,ապա մենք երեխաներից կգողանանք նրանց վաղվա օրը>>

Ջոն Դյուի

3. [4] Անտուան դը Սեն Էկզյուպերի - << Մարդկանց երկիրը>>և <<Փոքրիկ իշխանը>> վիպակներից մեջբերումներ:

Տեխնոլոգիայի ժամերին աշակերտները մեծ ոգևորությամբ ստեղծում են նորանոր աշխատանքներ հիանում դրանցով:Առաջին հերթին զարգանում է նրանց մտածողությունը,պարզից գնում են բարդին:

Դասն ինքն ին ստեղծագործական գործընթաց է, որի ժամանակ և սովորեցնում ենք և սովորում ինքներս : Այս գործընթացը շատ բարդ և միևնույն ժամանակ շատ հետաքրքիր է ,որի ժամանակ բախվում ենք այնպիսի բարդ խնդիրների որոնց լուծումը պետք է գտնել նոր մեթոդներ կիրառոլով ,որպեսզի հասնենք վերջնարդյունքին:

Դասը երեխայի մենաշնորհն է ,իսկ ուսուցիչն այդ պրոցեսի ակտիվ կազմակերպիչը պետք է լինի: Դասը պետք է տարբերվի նախորդներից,չկրկնվի: Յուրաքանչյուր դաս կազմակերպվում է յուրովի,լրացվում են նախորդ դասի բացերը:

,,Տեխնոլոգիա,, առարկան ուսումնասիրելիս աշակերտները կհասկանան ,որ ոչինչ չի կարելի թափել.նույնիսկ թափոններից կարելի է պատրեստել պիտանի նկարներ և իրեր:

Աշակերտների մոտ կձևավորվի խնայողական վերաբերմունք թղթի,ապակու կտորների,սերմերի ,քարերի նկատմամբ:Նրանք կսկսեն ստեղծագործել: Կարելի է հնամաշ իրերից պատրաստել արվեստի գործեր: Դրանք նոր շունչ են առնում ավելի վառ երևակայություն ունեցող, հատուկ ընդունակություններով օժտված աշակերտների մոտ: Նրանք սկսում են մտածել,պրպտել,որոնել: Այստեղ մեծ է ուսուցչի դերը ,որը պետք է կիրառի մեթոդներ , որոնք կխթանեն աշակերտների ստեղծագործական միտքը:

Աս ընթացքում կարևոր է կիրառել զրույցի ցուցադրման մեթոդները: Մինչև դասի թեման ուսումնասիրելը կարելի է նախապես կազմակերպել էքսկուրսիա ՝ դաշտ,պուրակ որտեղ աշակերտները իրենք կհավաքեն անհրաժեշտ նյութերը, կհականան և կկարևորեն բնության դերը մարդու կյանքում:

Տեխնոլոգիայի դասընթացի ժամանակ շատ կարևոր է ,որ միշտ պահպանվի միջառարկայական կապը:

Աշակերտները ակտիվ մասնակցում են ողջ դասապրոցեսին,ոգևորվում են իրենց կատարածով , կարողանում են գնահատել և իրենց , և ընկերների կատարած աշխատանքները: Գրում են փոքրիկ քառյակներ ,աքրոստիկոսներ:

Օրինակ խճանկար պատրաստելիս աշխատեցինք և թիմային ,և անհատական: Բոլոր աշխատանքներն էլ լավ ստացվեցին, սակայն թիմային աշխատանքը ավելի հեշտ և արագ ստացվեց:Վերջում ցուցադրությունը և գնահատումը պարզ դարձրեց , որ աշակերտները հենց այնպես ոչինչ չէին արել,նրանք իրենց աշխատասիրությունը և ստեղծարար ոգին էին դրել յուրաքանչյուր աշխատանքում: Համագործաքցային մեթոդը տվեց իր արդյունքը:

Եզրակացություն

Աշակերտների ստեղծարարության զարգացումը սկսվում է ընտանիքից մանկապարտեզից ,դպրոցից և հասարակության տարբեր մարդկանց հետ շփումից:Սակայն աշակերտների հետագա ստեղծագործական մտքի հիմքը դրվում է տարրական դասարանում:Երեխան դպրոց է գալիս , իր հետ բերելով ոչ հիմնավորված ունակություններ բացառությամբ բարձր տրամաբանությամբ օժտված երեխաների :Ուսուցչի հիմնական խնդիրն է ,նույնիսկ քչի վրա կարողանա և դնի այն հիմնաքարը , որը հետագայում կանրադառնա նրա մտքի ճկունության վրա: Այս տարիքում է լուծվում շատ հարցեր,հատկապես բարձր դասարաններում լավ սովորելու,արարաելու.ստեղծագործելու ցանկաությունները:Ամենակարևորն այն է ,որ աշակերտներին սովորեցնել նպատակներին հասնելու կարճ ճանապարհը,հեշտից դժվարին գնալու հմտությունները:

Դպրոցի արդյունավետությունը որոշվում է նրանով, թե որքանով է կրթական գործընթացը ապահովում աշակերտների ստեղծագործական ունակությունների զարգացումը, պատրաստում նրանց հասարակության կյանքում:

Մեր կողմից դրված առաջին առաջադրանքի հետ կապված ՝ բացահայտվեցին հետևյալ արդյունքները. Ստեղծագործական ունակությունները մարդու որակի անհատական բնութագիրն են, որոնք որոշում են նրա տարբեր տեսակի ստեղծագործական գործունեության հաջողությունը: Դրանք հիմնված են մտածողության և երևակայության հոգեբանական գործընթացների վրա, հետևաբար, երեխայի ստեղծագործական ունակությունների զարգացման հիմնական ուղղություններն են արդյունավետ ստեղծագործական երևակայության զարգացումը և ստեղծագործականություն ձևավորող մտածողության որակների զարգացումը: Անհրաժեշտ է օգտագործել բոլոր հնարավորությունները երեխայի ստեղծագործական և ստեղծագործական ունակությունների զարգացման համար, քանի որ ժամանակի ընթացքում այդ հնարավորություններն անդառնալիորեն կորչում են: Ստեղծագործության հետևյալ ցուցանիշները նույնպես բացահայտվեցին որպես ստեղծագործականությունը որոշող ցուցանիշներ.

-մտքի սահունություն (գաղափարների քանակ);

-մտքի ճկունություն (մի գաղափարից մյուսը անցնելու ունակություն);

-ինքնատիպություն (գաղափարներ ստեղծելու ունակություն);

-հետաքրքրասիրություն;

Պարզվեց, որ երեխաների մեջ ստեղծագործական ունակությունների զարգացման տարբեր եղանակներ կան, բայց ստեղծագործական ունակությունների հաջող զարգացումը հնարավոր է միայն այն դեպքում, երբ դրա համար նպաստավոր պայմաններ են ստեղծվում.

1.օժանդակ մթնոլորտի ապահովում;

2.ուսուցչի կողմից բարեգործություն, երեխային քննադատելուց հրաժարվելը.

.խոսքի խրախուսում օրիգինալ գաղափարներ;

.պրակտիկայի հնարավորություն տալը;

.խնդիրների լուծման ստեղծագործական մոտեցման անձնական օրինակ օգտագործելը.

.հնարավորություն տալով երեխաներին ակտիվորեն հարցեր տալ:

Բայց պետք է նշել, որ բարենպաստ պայմանների ստեղծումը բավարար չէ ստեղծագործական բարձր կարողություններ ունեցող երեխայի դաստիարակության և վերապատրաստման համար: Երեխաների ստեղծագործական ներուժը զարգացնելու համար անհրաժեշտ է նպատակային աշխատանք:

«Ստեղծագործությունը … այնքան կարևոր է, ոչ թե այն պատճառով, որ այն տանում է ինչ –որ նոր բանի ստեղծմանը, այլ որովհետև դա տիեզերաբանական գործընթաց է՝ հոգևոր, կենտրոնացնող և հագեցնող: Այն պարունակում է նորի ծննդյան ուրախությունն ու բերկրանքը »

Գրականություն

1. Անտուան դը Սեն Էկզյուպերի - << Մարդկանց երկիրը>>և <<Փոքրիկ իշխանը>> վիպակներից մեջբերումներ:

2. Բոգոյավլենսկայա Դ.Բ. Ստեղծագործության հոգեբանություն: Դասագիրք. Օգուտ. - Մ.: Ակադեմիա, 2002

3. Համացանց

4. <<Նախաշավիղ>> 4. 2017 էջ 23 հոդված <<Կրտսեր դպրոցականի տրամաբանական ,ստեղծագործական մտածողության զարգացումը>>:

5. Վ. Ս. Սուխոմլինսկին դաստիարակության մասին, Եր.: «Լույս», 1976թ
6. «Տեխնոլոգիա» առարկայի չափորոշիչ և ծրագիր, Երևան, 2012թ.